Ինչպես նշում են հետազոտողները, ԽՍՀՄ տարածքի էթնոքաղաքական հակամարտություններին նախորդող տասնամյակների ընթացքում, խորհրդային քաղաքական համակարգը կասեցվում էր ազգային /էթնիկ/ շահերի գիտակցման ու քաղաքականության ոլորտում դրանց հետամուտ լինելու հնարավորություններ: Խորհրդային հասարակության սոցիալական կառուցվածքում էթնիկ դիրքորոշումներն առկա էին, սակայն գաղտնի: Որևէ էթնիկ հարաբերությունների զրոստումներ թույլատրված էին միայն ուղղահայաց ուղղությամբ կենտրոնի նկատմամբ, սակայն ոչ հորիզոնական, որպես միայնակ միջև էթնոսների փոխհարաբերություններ: Ուստի և էթնիկ հիերարխիան գոյություն ուներ միայն կենտրոնական իշխանության հետ հարաբերություններում և զրոստումներ էր ժողովուրդների քաղաքական-իրավաբանական կարգավիճակի տեսքով /էթնոսի քաղաքական դիրքորոշման իրականացում որպես միութենական հանրապետության, ինքնավար մարզի և այլնի տիտուլյարություն/: Սակայն, դա անվիճելիորեն, թեև *գաղտնի*, պրոպեղվում էր ազգամիջյան հորիզոնական հարաբերությունների բնույթի վրա³⁷:

Բազմազգ պետության տարածքում էթնոսների միջև հարաբերությունների քաղաքական կոնտեքստը կառուցվում էր հստակ հիերարխավորված համակարգով, և նման համակարգի գլխավոր կառուցողական հիմքը ինտերնացիոնալիզմի գաղափարախոսությունն էր: Ըստ պետական կառուցվածքի տեսակի լինելով դաշնություն՝ ԽՍՀՄ-ը, որպես պատմական ազգի նոր տիպի ձևավորմանը միտված հստակ քաղաքական ուղղվածության դաշնային քաղաքական համակարգ, իրենից ներկայացնում էր բարդ պետական-իրավական գոյացություն, որը իշխանության ուղղահայաց քաղաքական կառուցման կոշտ պայմանավորվածությունը համատեղում էր խորհրդային ազգակառուցման գոլտրիֆի հռչակման հետ: Ըստ քննորոշման տվյալ ղեկավարին իր մեջ պարունակում էր ԽՍՀՄ շրջանակներում էթնիկության ցանկացած հարցի այնպիսի մակարդակի «վերացման» ձեռքբերման վերջնական նպատակ, որը տարբեր էրնազգային նույնակառուցման տարրալուծման ճանապարհով հնարավորություն կտար հանգել ԽՍՀՄ բոլոր ազգերի ու ժողովուրդների կողմից իրենց, որպես մեկուկես ու միասնական ինտերնացիոնալիզացված «խորհրդային ազգի» ընկալման իդեալական իրավիճակին: ԽՍՀՄ տարածքում նոր ազգակառուցման ղեկավարին շերտադրվում էր վարչա-կուսակցական ուղղահայացի կառուցման բարդ համակարգի վրա, որն իր հեթոքին ձևավորվում էր նույնակառուցման չափանիշերից մեկի «խորհրդային դաշնության էթնոազգային

հատկանիշի» վրա /միութենական հանրապետություն, ինքնավար հանրապետություն, ինքնավար մարզ և այլն/:

Բազմազգ երկրի պետական իշխանության ուղղահայաց բավական արդյունավետությանը էր աշխատում, և դրանում էր իշխանության կառուցման խորհրդային կուսակցական գաղափարախոսության որոշակի արժանիք, սակայն արհեստականորեն ստեղծված պետական գոյացությունների շրջանակներում /միութենական հանրապետություններում/ հայտնված էթնոսների զարգացման սոցիալ-տնտեսական, սոցիալ-մշակութային և ընդհանուր առմամբ քաղաքակրթական հորիզոնական ամհամասանությունները գտնվում էին «խորհրդային ազգակառուցման» գաղափարախոսության կոշտ շրջանակներից «դուրս գալու» մշտական սպառնալիքի տակ³⁸:

Ինչպես ԽՍՀՄ փլուզման, այնպես էլ հետխորհրդային տարածքում անկայի պետությունների գոյության պայմաններում հակամարտությունների էթնիկ բնույթը զգալիորեն կամխորշված էր ազգային հարաբերությունների ոլորտի այն քաղաքականությանը, որն ի սկզբանե տարվում էր բուլշևիկների կողմից: Հռչակելով ազգերի ինքնորոշման իրավունքի մասին կարգախոսը, բուլշևիկները գնացին ոչ միայն ազգային սկզբունքով երկրի վարչա-տարածքային բաժանման ուղիով, այլև շատ դեպքերում հենց իրենք էին նպաստում բազմաթիվ ազգերի առաջացմանը: Բնական է, որ «ռուսական» տարածքներում գերկենտրոնացման դեմ ուղղված համընդհանուր բողոքը գործնականում վերածվեց տարածաշրջանային անջատողական տրամադրության, իսկ ազգային գոյացություններում այն ընդունեց էթնոքաղաքական հակամարտության ձև, որը կենտրոնի քեյալաքաղքը մեկնաբանում էր որպես կայսրության վերածնման և հանրապետությունները գաղութների վերածնման ծգտում: Նույնակառուցման ճգնաժամը խորացավ նրանով, որ խորհրդային մարդկանց դասակարգային ինքնագիտակցության գերիշխման ծգտումը գործնականում ձախողվեց: Խորհրդային հասարակության զարգացման հետ դասակարգային միասնությունը որպես արժեքային կողմնորոշիչ, էլ ավելի էր կորցնում իր նշանակությունը: Դրա տեղը զգալիորեն զբաղեցրեց անհատի էթնիկ նույնակառուցումը, հետևաբար նաև դասակարգի լոյալությանը փոխարինման եկավ իր ազգի լոյալությունը³⁹:

ԽՍՀՄ սահմաններում, այդ պետության գոյության ամբողջ պատմության ընթացքում ակտիվորեն ու նպատակաուղղված ձևով որպես քաղաքացիական նույնակառուցման ձևավորվում էր «խորհրդայնության» պատկերացումը /«խորհրդային մարզ»/, սակայն, ըստ որում, անտեսվում էր, իսկ պարբերաբար նաև արգելվում էր էթնիկ նույնակառուցման պաշառումը: «Խորհրդային» հասկացությունը որպես ԽՍՀՄ-ում ձևավորված քաղաքացիական նույնակառուցում, իր մեջ ներառում էր որ միայն պետականացվածության, այլև գաղափարախոսականության ասպեկտը, քանի որ ԽՍՀՄ քաղաքական համակարգը կառուցվում էր կոմունիստական գաղափարախոսության հիման վրա⁴⁰:

Խորհրդային ազգագրությունը շրջանառության մեջ էր դրել նոր կատեգորիալ-հասկացութային ապարատ, որը պետք է կարողանար արտահայտել խորհրդային պետության շրջանակներում ազգաշինարարության ընդհանուր քաղաքական-գաղափարական ուղղվածությունը և առավելապես հեռացված լինել երկրի տարածքում կոնկրետ էթնոսների կոլեկտիվ ինքնագիտակցության իրավական բաղկացուցիչը: Միութենական հան-

րականության որևէ ազգի բնորոշման ժամանակ գիտական շրջանառության մեջ ամրագրվել էր «սոցիալիստական» հասկացությունը /օրինակ, «հայկական սոցիալիստական ազգություն», ինչը եթևուները «կապում էր» կենտրոնական կուսակցական իշխանության քաղաքական-գաղափարական ցուցանքը⁴¹:

1980-ական թվականների վերջին, ԽՍՀՄ բազմազգ տարածքում հաստատվել է որոշակի եթևուկարգավիճակային հիերարխիա, որն իր հերթին ձևավորվել էր ԽՍՀՄ ազգային քաղաքականության ազդեցության տակ /մի կողմից, կենտրոնը հենվում էր քաճակապես գերակշռող ազգերի քաղաքականության վրա, իսկ մյուս կողմից ակտիվ միջոցներ էր ձեռնարկում, որոնք ուղղված էին ժողովուրդների սոցիալ-տնտեսական ու մշակութային անհավասարության վերացմանը/ Այդ ժամանակահատվածում, կենտրոնի հրաժարումը տարածաշրջանների մակարդակում վերնախավերի ձևավորման նոճենկատուրային սկզբունքից, հանրապետության շրջանակներում էթնիկ խմբերի մոթիվացիայի համար նրա զործունեության խթան հանդիսացավ ուղղված իշխանության կառույցներում իր դիրքերի ամրապնդմանը: Այդուհետ էթնոսի քաղաքական կարգավիճակը էթնովերնախավերի կողմից սկսեց գիտակցվել որպես սեփական իշխանական ռեսուրս, ուստի և 1980-ական թվականների երկրորդ կեսին առանձին միութենական հանրապետությունների մասշտաբով սկսվեց էթնիկ խմբերի պայքարը կարգավիճակային դիրքերի փոփոխման համար:

Ազգայնականության հետազոտող է. Գելլենը նշում է, որ 1980-ական թվականների երկրորդ կեսին ազգայնականությունը սկսեց լրացնել խորհրդային տարածքի վակուումը, որը գոյացել էր խորհրդային կոմունիստական գաղափարախոսության քննադատական գիտակցումից և Միության միասնական պետա-իրավական մեխանիզմների կոռոզիայից հետո. «էթնիկ ազգայնականությունը բնականորեն ծագել էր յոթ տասնամյակների ընթացքում ձևավորված յակոբինականության պայմանների հետևանքով: Դրան սնուն է երկակի վակուումը [ըթրոնե հակադրվող գաղափարախոսության քացակայությունը և լքոթոնե հակադրվող ինստիտուտների քացակայությունը]»⁴²:

1980-ական թվականների երկրորդ կեսի Ղարաբայան Գակամարտության ակտիվացման շրջանում, երկրի կենտրոնական ղեկավարության ընդհանուր գնահատականները կատուցվում էին «ղարաբայան հայերի լեզիզմի դատապարտման» շուրջ⁴³: «էզդիզմ» հասկացության մեջ դրվում էր Լեռնային Ղարաբաղի հայ ժողովրդի «քաղաքական-գաղափարական անհետատեսության» իմաստը, որը որպես իր պահանքների հիմնավորում, առաջին հերթին ներկայացնում էր միութենական հանրապետության տարածքում /ԱդրբեյՄՂ/ իր իրավունքների ոտնահարման փաստարկությունը⁴⁴, որտեղ նա օճոված էր պետականաստեղծ էթնոսի իրավունքներով:

Այս հետազոտության մեջ մենք համախ ենք դիմում ԱդրբեյՄՂ հայ ժողովրդի բնորոշմանը որպես ի սկզբանե ԽՍՀՄ կազմում այդ միութենական հանրապետության պետականաստեղծ էթնոզգգի: Դրա հաստատման համար անհրաճեչտ է բերել հետևյալ փաստարկումները:

ԱդրբեյՄՂ-ն ստեղծվել էր որպես մահնեղականների /կովկասյան քաքարների/ և հայերի խորհրդային սոցիալիստական հանրապետություն, որի հիմնավորումն է հանդիսանում 1921 թ. հուլիսի 5-ի ՌԿԿ/բ/ Կովկասյան բյուրոյի հայտնի որոշմամբ Լեռնային Ղարաբաղը ԱդրբեյՄՂ-ի վարչական սահմաններում ընդգրկելու քաղաքական մոտիվացիան. «Մահնեղական-

ների ու հայերի միջև խաղաղության հաստատման անհրաճեչտությունից կ(նելու...»: ՌԿԿ/բ/ Կովկասյան բյուրոն 1921 թ. փաստացի հայերին ու մահնեղականներին ճանաչել է ԱդրբեյՄՂի ազգային-պետական կառուցվածքի շուրջ մղվող հակամարտության կողմեր, հետևաբար պետականության այդ խորհրդային ձևի աղբյուրներ և կրողներ: «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ձևավորման մասին» 1923 թ. հուլիսի 7-ի ԱդրբեյՄՂ ԿԿԿ Դեկրետում ԱդրբեյՄՂ-ի ազգային-պետական կառուցվածքը բնորոշված է որպես մահնեղականների ու հայերի «միասնական պետական միություն»: Դեկրետում խորհրդային իշխանության հիմնական խնդիր էր իջակված «միասնական պետական միության մեջ» հայերի ու մահնեղականների ներառական համագործակցության հաստատումը, որպիսին պետք է դաճանար ԱդրբեյՄՂ-ն:

ԱդրբեյՄՂ ԿԿԿ-ի Դեկրետի հիման վրա ստեղծված Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը ստացավ խորհրդային պետականության տեսք, ինչը հանդիսանում է ԱդրբեյՄՂ հայության պետականաստեղծ կրնելու մասին ի սկզբանե հռչակված թեզի հաստատումը, որը սովալ խորգավիճակն արտահայտում էր ի դեմս Լեռնային Ղարաբաղում սեփական ազգային-պետական ինքնավարության ստեղծմանը: Այս համատեքստում Լեռնային Ղարաբաղի ինքնավարությունը կարելի է համարել ԱդրբեյՄՂ հայության պետականաստեղծ կարգավիճակի քաղաքական-իրավական պաշտպանվածության գլխավոր ձևը:

ԱդրբեյՄՂ-ի արտաազգային բնույթը պայմանավորված էր ոչ միայն Արևելյան Անդրկովկասի ազգային բազմազանությամբ, ոչ միայն նրանում, որ կովկասյան քաքարները վճռորոշ դեր չէին կատարում մարզի տնտեսության մեջ հատկապես արդուներության, որտեղ առանցքային դիրքերը հիմնականում գտնվում էին ռուսների և հայերի ձեռքերում, մի խոսքով ոչ միայն սոցիալ-պատմական հանգամանքներով, այլ նաև էթնոտարածքային կառուցվածքի առանձնահատկություններով: ԱդրբեյՄՂ-ն ընդգրկում էր տարածքներ, որոնք թե պատմականորեն և թե էթնիկ առումով հայկական էին⁴⁵:

Խորհրդային Միության կենտրոնական և հանրապետական ղեկավարության կողմից Ղարաբաղյան Գակամարտության էթնոքաղաքականացման ուղղված արագ «կուսակցական» արձագանքման քաղաքական մեթոդների կիրառման արդուներում ծագած մարդու իրավունքների խախտումները հանգեցրին այս հարցում իրավիճակի վատթարացմանը: Դրա հատուկ օրինակն է «ԱդրբեյՄՂական ԽՍՀ-ի ԼԴԻՄ-ում կառավարման գայտուկ ձևի մտցման մասին» Գրամանագրի ընդունման հետ կապված «պատմությունը»: 1989 թ. հունվարի 12-ին խորհրդային Միության Գերագույն խորհրդի Նախագահությունը «սովալ հարցը քննարկելով ԱդրբեյՄՂական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության հետ» /ինչպես նշված է Գրամանագրի նախաբանում, Գրամանագիր է ընդունել «ԱդրբեյՄՂական ԽՍՀ ԼԴԻՄ-ում կառավարման հատուկ ձև մտցնելու մասին»: Զանի որ գոյություն չունեին օրենսդրական ակտեր կառավարման նկատ ձևի վերաբերյալ, ապա Գրամանագիրը հանդիսացավ առաջին և միակ փաստաթուղթը, որը կանոնակարգում էր դրա իրավական ոճեփմը: Առանց որևէ նախնական քննարկման ու փորձաքննության ընդունած այս ակտը պարունակում էր ներքին հակասություններ, ինչպես նաև հակառակ էր ԽՍՀՄ Սահմանադրության մի շարք դրույթների: Այսպես, ընդունված Գրամանագիրն ինքնին հանդիսանում էր մարդու իրավունքների կոպիտ ոտնահար-

ման օրինակ: Մասնավորապես, կոպտորեն խախտվում էր 1966 թ. Քաղաքացիական ու քաղաքական իրավունքների մասին Միջազգային Համաձայնագրի 25-րդ հոդվածը, որը քաղաքացիներին «տաանց որևէ խտրականության... և առանց իրավունքների ու հնարավորությունների չհիմնավորված սահմանափակման տրամադրում էր իրավունք. ա/ պետական գործերում մասնակցություն ունենալու ինչպես անմիջականորեն, այնպես էլ ազատորեն ընտրված ներկայացուցիչների միջոցով, բ/ ընդհանուր հավասարության պայմաններով մասնակցել պետական ծառայությանը իր երկրում»: Այսպիսով, ուսնահարվում էին քաղաքացիների քաղաքական իրավունքների հանրագումարի անենակարևոր իրավունքները:

Ավելի ուշ, 1991 թ. սկզբին Հայաստանի Գերագույն խորհուրդը խնդրանքով դիմեց ԽՍՀՄ Սահմանադրական վերահսկողության Կոմիտեին ղեկավարել Հրամանագրի 3-րդ մասի 1-ին հոդվածի համապատասխանությունը /մարզխորհրդի իրավասությունների կասեցման մասին/ ԽՍՀՄ Սահմանադրությանը: Սահմանադրության խախտումներն ակնհայտ էին, սակայն համաձայն գործող օրենսդրությանը, Կոմիտեի կողմից նման երևույթի ամրագրման պարագայում պետք է կասեցվեր Հրամանագրի համապատասխան կետի գործածությունը, և պետք է վերականգնվեին ԼՂԻՄ մարզխորհրդի իրավասությունները: Բնական է, որ դա կհանգեցներ բավական լուրջ քաղաքական հետևանքների, ուստի և Կոմիտեն ամեն կերպ ձեռնարկում էր հարցի լուծումը և դրա վերջնական քննարկմանը վերադարձավ միայն այն ժամանակ, երբ արդեն պարզ էր, որ ԽՍՀՄ-ում, ուստի նաև ինքը Կոմիտեն իր վերջին օրերն են ապրում, և Կոմիտեի իրավաբանական որոշումը չի կարող որևէ ազդեցություն ունենալ իրավիճակի վրա⁴⁶:

Ինչպես նշված էր Սահմանադրական վերահսկողության Կոմիտեի 1991 թ. Մայիսի 28-ի որոշման մեջ. «քանի որ ԼՂԻՄ-ում կառավարման հատուկ ձև մտցնելու և դրա հետ կապված ԼՂԻՄ ժողովրդական դեպուտատների խորհրդի իրավասությունները կասեցնելու մասին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Նախագահության 1989 թ. հունվարի 12-ի Հրամանագրի դրույթները կորցրել են ուժը ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 1989 թ. Մայիսի 28-ի որոշման հետևանքով⁴⁷, ապա այլևս անհրաժեշտություն չկա այլ դրանց իրավաբանական գնահատականը ԽՍՀՄ Սահմանադրությանը և Օրենքների համապատասխանության մասին: Միևնույն ժամանակ ԽՍՀՄ Սահմանադրական վերահսկողության Կոմիտեն ուշադրություն է հրավիրում այն բանի վրա, որ այն ժամանակ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Նախագահության իրավասությունների մեջ չէր մտնում որևէ ժողովրդական դեպուտատների խորհրդի գործունեության կասեցման իրավունքը»⁴⁸:

§ 2. Գարաբաղյան Հակամարտության պատճառների սահմանադրականական ասպեկտները մարդու իրավունքների պաշտպանության լուսի ներքո

Գարաբաղյան Հակամարտության պատճառների բացահայտման սահմանադրա-իրավական ասպեկտները բխում են մարդու իրավունքների որպես քաղաքական-իրավական ինստիտուտի ընդհանուր նորմատիվային հատկանիշներից: Իր նորմատիվ որակումով, մարդու իրավունքները հանդես են գալիս ցանկացած քաղաքական համակարգի նկատմամբ ունիվերսալ պահանջների տեսքով, որոնք կարող են կիրառվել որպես ներպետական ու միջազգային հարաբերությունների գնահատման չափա-

նիշեր: Այս տեսանկյունից, մարդու իրավունքները գոյություն ունեն որպես ունիվերսալ քաղաքական նորմերի ու ստանդարտների համակարգ, որոնք գործում են անկախ կոնկրետ երկրի սահմանադրական կարգի և իշխող ռեժիմի բնույթից: Դա պահանջների որոշակի շեմ է, որին պետք է հարմարվի իշխանության ցանկացած համակարգ:

Եռյամսյակ ԽՍՀՄ տարածքում առկա տոտալիտար ռեժիմի պայմաններում, Միության քաղաքական իշխանությունները հռչակում էին մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների որոշակի լուրջագն, դրանով իսկ իրենց համար որոշելով մարդու իրավունքների ոլորտի սեփական «պահանջների շեմը»:

ԽՍՀՄ պետա-իրավական տարածքում առաջացած էքստրադաքական հակամարտությունները իրենց սահմանադրա-իրավական պատճառայնությունը, խորը փեղքեման մարմնավորում հանդիսացան ԽՍՀՄ սահմանադրական ու օրենսդրական ակտերում հռչակված մարդու իրավունքների ու ազատությունների և դրանց իրական ապահովման և երկրի հասարակական-քաղաքական կյանքի քաղաքական, սոցիալ-տնտեսական ու մշակութային պրակտիկայում դրանց իրականացման մեջ: ԽՍՀՄ-ում էքստրադաքական հակամարտությունների առաջացման պատճառների համատեքստում, տվյալ խզումը առանձնապես շոշափելի էր բազմազգ պետության էթնոսների կոլեկտիվ իրավունքների պաշտպանության տեսակետից: ԽՍՀՄ որոշ էթնոսները իրենց պարփակ ու թվաքանակով գերակշռող բնակեցման վայրերում ունենալով ինքնավարության կարգավիճակ, իսկ որոշ դեպքերում նույնիսկ պետականաստեղծ կարգավիճակ կոնկրետ միութենական հանրապետության կազմում, ենթարկվում էին զգալի խտրականության, ինչը գլխավոր պատճառներից մեկը դարձավ խտրականության ենթարկվող էթնոսների որպես կոլեկտիվ սուբյեկտների կողմից, մարդու իրավունքների պաշտպանության հարցերի արդիականացման համար:

Էթնոքաղաքական հակամարտության մեջ դիմակայող կողմերի մասնակցության էությունը կրում է կոլեկտիվ բնույթ: Դրանից բխող ամենցյալ հետևանքը հանդիսանում է այն փաստը, որ էթնոսները դիմակայության մեջ են մտնում որոշակի խմբին պատկանելության զգացողության հիման վրա, որն իրեն նույնականացնում է որպես ինքնուրույն և այլ էթնիկ խմբի կատմամբ իրեն հակադրող էթնոս: Մեխանիզմ շահերը «գերակշռող էթնոսի» շահերին հակադրող խտրականության ենթարկվող էթնոսը իր իրավունքների ուսնահարման տարրերը կուտակում և արտահայտում է կոլեկտիվության տեքստներով: Այլ կերպ ասած, էքստրադաքական հակամարտության մեջ դիմակայող էթնոսների կողմից արտահայտվում /հատկապես խտրականության ենթարկվողի/ և կոլեկտիվ պահանջների համար մոնիվզացիոն հիմք են հանդիսանում հենց տվյալ էթնոսի կոլեկտիվ իրավունքները: Վերջինս հանդես է գալիս որպես կոլեկտիվ իրավունքների կրող, այլ ոչ թե տվյալ էթնոսի պատկանող անձանց անհատական իրավունքների հանրապետամարի կրող:

Միութենական հանրապետության շրջանակներում կոնկրետ էթնոսի պետականաստեղծության իրավունքի հատկանիշը մատնանշում է այն, որ էթնոսի ներկայացուցիչների անհատական իրավունքների և ընդհանուր առմամբ էթնոսի կոլեկտիվ իրավունքների խտրականության ժամանակ ի հայտ է գալիս պետականաստեղծ էթնոսի կողմից իր սեփական քաղաքական ապագան ինքնուրույն որոշելու օրյեկտիվ իրավունքի կոլեկտիվ պա-

հանքի իրավիճակ, առավել ևս այն պարագայում, երբ փոփոխվում է հենց այդ բազմազգ պետական գոյաբնության քաղաքական կարգավիճակը:

Մարդու իրավունքների խտրականությունն ու ուժնահարուն իրենց անմիջապես արտահայտությունը կարող են ունենալ անհատական մակարդակում կոնկրետ մարդու վերաբերյալ: Ընդ որում, իհարկե ուժնահարված իրավունքների պաշտպանությունը պետք է ապահովի հենց անհատական մակարդակում: Ասկայն, երբ ուժնահարված է պետականատեղծ էքնոսի կողմից սեփական քաղաքական կարգավիճակը ինքնուրույն որոշելու հիմնարար իրավունքը, ապա էքնոսի իրավունքները պետք է ստանան կոլեկտիվ պաշտպանություն:

Մեր տեսակետից Ղարաբաղյան Չակամարտության սահմանադրաիրավական պատճառների առավել լիարժեք ներկայացման համար անհրաժեշտ է մեջբերել ԽՍՀՄ սահմանադրական և ուժնադրական ակտերի որոշակի ցանկ: Ղարաբաղյան Չակամարտության ակտիվացման պահին մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում գործող խորհրդային օրենսդրության նորմերի ստորև շարադրված խախտումները արդեն առկա էին 1988-1989 թթ. ժամանակաշրջանում, այսինքն Լեռնային Ղարաբաղի ժողովրդի կողմից Ադրբեյժան կազմից դուրս գալու և ԳախխՍՀ կազմում ինքնավար մարզն ընդգրկելու մասին առաջ քաշված ապահանջի սկզբնական շրջանում: Սա մեզ հիմք է տալիս այդ խախտումների մասին խոսելու դրանք պատճառականության հիմքերից Լեռնային Ղարաբաղի հայրության պահանջների և միտքեցնական հանրապետության /Ադրբեյժան/ պետականատեղծ էքնոսի կոլեկտիվ իրավունքների արդիականացման առումով:

Անհատի իրավական կարգավիճակի սոցիալիստական հայեցակարգը հերքում էր մարդու իրավունքների հայեցակարգը: Խորհրդային Միության պաշտոնական դոկտրինում և պրակտիկայում «մարդու իրավունքներ» հասկացությունը կիրառելի չէր, համարվում էր ոչ դասակարգային, հետևաբար սոցիալիստական պետության հիմնական հայեցակարգին հակասող: Խոսք էր գնում միայն քաղաքացու իրավունքների մասին: Քաղաքացու իրավունքների հայեցակարգը կատուցվում էր իրավունքների ու պարտականությունների միահյուսման վրա: Ղա արտացոլված էր 1977 թ. ԽՍՀՄ Սահմանադրության նախաբանում, որը սահմանում էր, որ ԽՍՀՄ քաղաքական համակարգը «երաշխավորում է...իրական քաղաքացիական իրավունքների ու պատվությունների և հասարակության առջև պարտավորությունների ու պատասխանատվության համակցումը»: Սահմանադրության 59-րդ հոդվածում նշված է. «Իրավունքների ու պատվությունների իրականացումն անբախտելի է քաղաքացիների կողմից իրենց պարտավորությունների կատարումից»: Սոցիալիստական տեսության մեջ իրավունքների իրականացումը դիտարկվում էր ոչ թե որպես ինքնուրույն արժեք, այլ սոցիալիստական շինարարության համատեքստում⁴⁹:

1977 թ. ԽՍՀՄ Սահմանադրության մեջ ամրագրված էր անկայն ազգային պատկանելության ԽՍՀՄ բոլոր քաղաքացիների իրավահավասարության դրույթը, ավելին սահմանադրական մակարդակով գոյություն ունեւր հետևյալ նորմը. «Իրավունքների որևէ ուղղակի կամ անուղղակի սահմանափակում, քաղաքացիների առավելության ուղղակի կամ անուղղակի սահմանում ըստ...ազգային հատկանիշերի, ինչպես նաև ազգային բացառիկության, քշնամության կամ արհամարհանքի ցանկացած բարդ...օրենքով ենթակա են պատժի» /հոդված 36/: Խորհրդային օրենս-

դրության համաձայն ազգային և ռասայական իրավահավասարության խախտումները հանցագործություն են, որը նախատեսված է 1958 թ. ԽՍՀՄ «Պետական հանցագործությունների համար քրեական պատասխանատվության մասին» Օրենքի 11-րդ հոդվածով /ըստ ԽՍՀՄ զեբազույն Խորհրդի Նախագահության 1989 թ. ապրիլի 8-ի Չրամանագրի⁵⁰:

1977 թ. ԽՍՀՄ Սահմանադրությանը ԽՍՀՄ քաղաքացիների անձնական սեփականության տակ կարող են գտնվել «կենցաղի, անձնական օգուտագործման, տնային տնտեսության իրեն ու հարմարությունները, բնակելի տունը և աշխատանքային խնայարությունները» /հոդված 13/: Ենայն հոդվածն ամրագրում էր, որ «Քաղաքացիների անձնական սեփականությունը և դրա ժառանգման իրավունքը պաշտպանվում են պետության կողմից»: Չաշվի առնելով այն, որ ըստ 1977 թ. ԽՍՀՄ Սահմանադրության հոդված հանդիսանում էր բացառապես պետական սեփականություն /հոդված 11/, 13-րդ հոդվածը նախատեսում էր. «Քաղաքացիների օգուտագործման տակ կարող են գտնվել հողատարածքներ, որոնք օրենքով սահմանված կարգով տրամադրվում են տնտեսության վարելու /այլ բվում անատուն և քոշուն պահելու/, այգեգործության ու բոստանային տնտեսության համար, ինչպես նաև անհատական բնակարանային շինարարության համար: Քաղաքացիները պարտավոր են ռացիոնալ օգուտագործել իրենց տրամադրված հողահատակացումները: Պետությունը և կոլտնտեսությունները քաղաքացիներից աջակցություն են ցուցաբերում տնային տնտեսության վարման գործում»:

ԽՍՀՄ քաղաքացիները անձնական սեփականության իրավունքով պետական ու հասարակական բնակֆոնդերի տնեբում կարող էին ունենալ բնակարաններ /«Որպես անձնական սեփականություն քաղաքացիներին բնակարանների վաճառքի և դրանց պահպանման ու վերատրորվածման վճարումների մասին դրույթը» հաստատվել է ՌԽՖՍՀ Միենհատրների Խորհրդի կողմից 1989 թ. ապրիլի 21-ին/: Չեոք բերված բնակարանի նկատմամբ սեփականության իրավունքն առաջանում է առք ու վաճառքի պայմանագրի գրանցման պահից /ՌԽՖՍՀ Քաղաքացիական օրենսգրքի 135-րդ հոդված/:

ԽՍՀՄ Սահմանադրությունն ամրագրում էր ԽՍՀՄ քաղաքացիների բնակարանային իրավունքը. «Այս իրավունքն ապահովվում է պետական ու հասարակական բնակֆոնդի զարգացմամբ ու պահպանմամբ, կոուպերատիվ ու անհատական բնակարանային շինարարությանը աջակցությամբ, հասարակական վերահսկողությամբ բնակակերտի արդարացի բաշխման նկատմամբ, որը տրամադրվում է բարեկարգ բնակարանների շինարարության ծրագրի իրականացմանը զուգընթաց...» /հոդված 44/: ԽՍՀՄ Սահմանադրության 55-րդ հոդվածը ԽՍՀՄ քաղաքացիներին երաշխավորում էր բնակարանի անձեռնմխելիությունը. «Առանց օրինական հիմքի ոչ ոք իրավունք չունի բնակի կամքին հակառակ մտնել նրա բնակարանը»: Բնակարանի տակ հասկացվում էր ոչ միայն քաղաքացիների կողմից վարձակալվող կամ անձնական սեփականության իրավունքով նրանց պատկանող տարածքը, այլ նաև հավելյալ տարածքները, որոնք կապված են քաղաքացու անձնական կյանքի ոլորտի հետ: Խորհրդային օրենսդրությունը տալիս էր այն անձանց սպառիչ ցանկը, որոնք իրավունք ունեին բնակարան մտնելու, որից նրանք կարող էին օգուտվել օրենքով նախատեսված սահմաններում և նպատակներով: Քաղաքացիների բնա-

անճեղի անճեռնմխելույթյան իրավունքի խախտման համար սահման-
եր քրեական պատասխանատվություն /ՌԽՖՍՀ ԲՕ 136-րդ հոդված/
տորիդային օրենսդրությանը հայտնի էր «վարարում» հասկացու-
ը, այսինքն բնակարանից օգտվելու իրավունքից զուրկում օրենքով
անվանված հիմքերով և կարգով: Որևէ մեկը չէր կարող վտարվել իր
իրգրաբնակարանից օրենսգրքի 10-րդ հոդվածով: Մյուս կողմից
տյուրևս ամբողջ օրինակյան հիմքերով հարկադիր վտարվում էր, ապա
Վարարային օրենսգրքը սահմանում էր այն պայմանները, որոնց
ն վրա հնարավոր էր վտարվում և պաշտպանում էր վտարվողների
ուրենքերը: Վտարումից հետո տրամադրվող բնականկերեցը պետք
է կարգության մակարդակով համապատասխաներ տվյալ բնակավայ-
տական ու հասարակական բնակֆոնդի բնակարաններին, այսինքն
արձակվող առանձին բնակարան էր գրադեցնում, ապա նրան պետք
էր մատուցել նմանատիպ առանձին բնակարան, իսկ տարածքով բնա-
նը չպետք է ավելի փոքր լիներ, քան զբաղեցնում էր վարձակալը:
Չպալ լրացուցիչ մակերեսը, եթե դրա իրավունքը ուներ վարձակալը,
ու նաև պետք է հաշվի առնվեին ընտանիքի ու շաղկապյալը արժանի
ը /ՌԽՖՍՀ Բնակարանային օրենսգրքի 41-րդ հոդված/:

Պրիդային օրենսդրությունը նախատեսում էր նաև «բնականկերեկ
անճեռն գրադեցման» հնարավոր իրավիճակը, որի տակ ենթադրվում էր
նական և հասարակական բնակֆոնդի բնակարանի բնակեցում առանց
որամարդման սահմանված կարգի և վարձակալության պայմանա-
մակարանի ինքնակամ զբաղեցման պարտադիր իրավաբանական
անճի էր համարվում բնակարանի գրադեցումը միասնական
քրեիքի ու վարձակալության պայմանագրի: Եթե բնակարանը գրա-
եր առանց օրդերի, սակայն պաշտոնատար անձի թուլտվությամբ,
համարվում էր, որ այն զբաղեցվել է այդ պաշտոնատար անձի
առանց միջև կնքված վարձակալության ոչ իսկական պայմանագրով:
ակերեսի վարձակալության ոչ իսկական պայմանագրով գրադե-
ցված կատարվում էր վարչական կարգով դատական կարգով
այլ բնակարանի տրամադրման /ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 1987
իլի 3-ի Պլենումի Զրամանագիրը «դատարանների կողմից բնակա-
ն օրենսդրության իրականացման պրակտիկայի մասին»/: Իսկ եթե
եր ունենում բնականկերեկի բացահայտ ինքնակամ զբաղեցում
նկ առանց վարձակալության ոչ իսկական պայմանագրի, ապա
նը կատարվում էր վարչական կարգով դատախազի սանձիցիայով:
ՅՍ քաղաքացիների գույքային և բնակարանային իրավունքների
նության խորիդային նորմերը մեկ կողմից մեքերով էլ են այն
նուններից ելնելով, որ 1988-1989 թթ. ընթացքում տեղի են ունեցել
ՅՄ հայերի գույքային և բնակարանային իրավունքների ոսմանաբա-
զմաբախվ դեպքեր խորիդային Արթերջանի հանրապետական
բյուրոների և հանրապետությունում ծագած ազգայնական շար-
րքերի ակտիվիստների կողմից:

ային դարաբաղում և նրա շուրջ էրճոքադարական իսկամատ-

պետականաստեղծ էրճոս լինելու կոլեկտիվ իրավունքների իրականաց-
ման համար: Այս առումով ցայտույ և դեռ այն ժամանակ գործող
խորիդային օրենսդրության նորմերի իրականացման վիճակը, որը
կանոնակարգում էր քաղաքական-իրավական ինքնորոշման շուրջ
ԽՍՀՄ էրճոսների կոլեկտիվ իրավունքների իրականացման իրավունք
և հիմքերը:
ԽՍՀՄ-ը միասնական միութենական-դաշնային պետություն էր: Խորիդ-
ային դաշնության բոլոր տարբերակների պետա-իրավական կարգավի-
նակը, այդ թվում նաև ինքնավար գոյացությունների, սահմանվում էր
ԽՍՀՄ Սահմանադրությամբ: ԽՍՀՄ միութենական-դաշնային կառուցված-
քի բարձրագույն պետա-իրավական սկզբունքն էր ԽՍՀՄ Սահմանադրու-
թյան և օրենսդրության գերակայությունը դաշնության տարբերակների
Սահմանադրությունների ու օրենսդրությունների նկատմամբ:

Ազգային մարզից մինչև միութենական հանրապետություն բոլոր
մակարդակների ազգային-պետական գոյացությունների իրավահավա-
սարությունը ԽՍՀՄ կամ կոնկրետ միութենական հանրապետության
չորսնակներում, հավանական պետա-իրավական «բաժանման» հարցի
շուրջ, ընդհանուր առմամբ, օրենսդրության 1990 թ. անրագրված էր ԽՍՀՄ
Օրենքի տեսքով «ԽՍՀՄ կազմից միութենական հանրապետության դուրս
գալու հետ կապված հարցերի լուծման կարգի մասին» /ՌՄՅՄ ԳԽ-ի
կողմից ընդունվել է 1990 թ. ապրիլի 3-ին/: Այս Օրենքը, որի ընդունման
ժամանակ «կողմ» են քվեարկել և ԱրդրՍՄ-ի և ԼՂԻՄ-ի ԽՍՀՄ ժողովը-
նական պատգամավորները, կոնկրետացնում էր ոչ միայն միութենական
հանրապետությունների, այլև ինքնավար գոյացությունների, ինքնավար
մարզի ոչ ինքնավար շրջաններ ունեցող միութենական հանրապետությու-
նում հանրաքվեյն անցկացվում է յուրաքանչյուր ինքնավարությունում:
Ինքնավար հանրապետությունների և ինքնավար գոյացությունների ժող-
վուրդը պահպանում է ԽՍՀՄ-ի կամ դուրս եկող միութենական հանրապե-
տության կազմում մնալու մասին ինքնորոշումը որոշում կայացնելու
իրավունքը, ինչպես նաև իր պետական կարգավիճակի մասին հարցա-
դրման իրավունքը: Միութենական հանրապետությունում, որի տարածքում
տակա են ազգային լճերի պարիակ բնակության վայրեր, որոնք կազմում
են տվյալ տարածքների բնակչության մեծամասնությունը, հանրաքվեի
արդյունքների ամփոփման ժամանակ այդ տարածքների քվեարկության
արդյունքները առանձին են հաշվառվում:

Այնհայտ է, որ 1990 թ. ապրիլի 3-ի ԽՍՀՄ Օրենքի նորմերի դիտար-
կումը դարաբաղյան Գնակամարության սահմանադրա-իրավական պատ-
նաների վրա որանց ազդեցության դիրքերից սխալ է հանդիսանում:
Օրենքի ընդունման պահին, դարաբաղյան Գնակամարության արդեն
անցել էր հակամարտության տարբերակների միջև էրճոքադարական դիմա-
կայության հիմնական տարրերի պատճառային հիմքի ընդհանուր ձևավոր-
ման փուլը: Միևնույն ժամանակ, մեր տեսանկյունից Օրենքը նպատակ
ԱրդրՍՄ պետականաստեղծ էրճոսներից մեկի ինքնորոշման կոլեկտիվ
պահանջների հստակեցմանը, ինչպես նաև օրենսդրական մակարդակով
պետականացմանը: Օրենքի ընդուն-

որը բխում էին միութենական
ով նրանից, որ ԽՍՀՄ-ը ժողո-
ունը ինքնորոշման ձև է /տեսա-
քցին ինքնորոշման տեսակ/,
իրավունքը չի կարող նման
ավելի փոքր ժողովրդի: Ուստի
սամաձայնությունները, որոնք
ակ, ավելի խոշոր ազգային-
ւմ պետք է վերանայվեն, ընդ
Չրեքի 3-րդ հոդվածի նորմը
ւնը, որի համաձայն, սուվերե-
ունը կազմող, այլ սուվերենու-
նդիսանում պետության բոլոր
վարությունները և ազգային

ան պատճառների սոցիալ- ունքների պաշտպանության

քական հակամարտության
ավելի շատ բնորոշիչ են
«շահեր» հասկացությունը:
տիրողային տեսությունները
իջյան հարաբերությունների
ների երկրորդ կեսին ԽՍՀՄ
ր էքոնոմիկականացման
կավարությունը բացատրում
սական զարգացման անհա-
ամարտությունները փորձու-
տնտեսական ու մշակութա-
ի տրամադրման» բաղաբա-
ղեկավարությունը փորձում
ությունների պատճառները
այլ-տնտեսական հետամնա-
նում գոյություն ունեցող այլ
կա էր նաև Ղարաբաղյան
վ տնտեսական պատճառը
ության առաջնային հիմք,
ր չեզոքացնել ճգնաժամը
մբ⁵⁴ ու սպառնան ապրանք-

ործնականում հնարավոր չէ
ները, չէր տեղավորվում
եղուկցիոնիզմի շրջանակ-

որու իրավունքների պաշտ-
ները նախկին սոցիալիստա-

կան համակարգի երկրներում ավելի մեծ ուշադրություն է
սոցիալ-տնտեսական իրավունքներից, քան շուկայական
երկրներում. «...այն ժամանակ, երբ կենտրոնացված պլան
կիմնված տնտեսությամբ երկրները պաշտպանում էին
սոցիալական ու մշակութային իրավունքները, շուկայա-
յամբ երկրները հանդես էին գալիս բաղաբացիական
իրավունքների պաշտպանության դիրքերից, ընդ որու-
թյուններ տարակուսում էին, թե կարելի է կամ պետք է
անել, որպեսզի տնտեսական, սոցիալական ու մշակութա-
ները իրավական տեսանկյունից իրականացվեն հարկադր-
ելվում է նաև, որ «տնտեսական, սոցիալական ու
իրավունքները, ինչպիսիք են արդարացի աշխատավարձ
աշխատանքի համար հավասար վարձատրման իրավունքը
հաստատություններ ստեղծելու իրավունքը, մշակութա-
մասնակցելու իրավունքը...», պետությունից բացահայտ և
ջում են գերծ մնալ գործողություններից և հետևել նկա-
դարտներին, որոնք առաջին հերթին շաղկապվում է բար-
բաղաբական իրավունքների հետ»⁵⁵:

Խտրականությունը սոցիալ-տնտեսական իրավունք
հարցում խիստ էական է, իսկ արդի շրջանի որոշ է
հակամարտությունների իրողությունների առունով այն
էքոնոմիկի միջև հակամարտային դիմակայության պա-
հարցում:

Անհրաժեշտ է նշել, Ղարաբաղյան Հակամարտությու-
նը 1975-ի հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական իրավ-
ունքները, պատճառայնության տեսանկյունից, որոշ
էքոնոմիկական հակամարտության 1980-ական թվակա-
կեսի ակտիվացման շրջանում:

Մինևույն ժամանակ, իրենց իրավունքների պաշտպա-
նը 1975-ի հայ ժողովրդի պահանջների պատճառային
տնտեսական գործոնը էական կշիռ ուներ Ադրբեյջան
իրավունքների պաշտպանության ընդհանուր փաստարկ-
կան կողմը մարդու իրավունքների պաշտպանության հա-
տնտեսական փաստարկման հիմնավորման համար բե-
տակները:

Եթե 1970 թ. Ադրբեյջանում մեկ բնակչին ընկնող կա-
ները կազմել են 243 ռուբլի, Նախիջևանի ԻԽՄ-ում՝ 2
ԼՂԻՄ-ում ընդամենը 153 ռուբլի: Այս նույն ցուցանիշը
պատասխանաբար կազմել է 473, 334, 178 ռուբլի կամ
դակի 194, 125 և 116 տոկոսը: Ընդ որում, 1970 թ. դրու-
տությունում մեկ բնակչին ընկնող կապիտալ ներդրում
իսկ Նախիջևանի ԻԽՄ-ում՝ 114 ռուբլով ավելին էր:
Չնայած կապիտալ ներդրումների աննշանությանը դա-
յիրացվում շինարարական կազմակերպությունների նյու-
բազայի անբավարարության պատճառով: Այդ տարբ-
մարզի շրջկենտրոնները, շրջանները ի տարբերություն
հարևան շրջանների, շատ ավելի դանդաղ էին բարեկա-
նման անհամամասնության ցայտուն օրինակ էր

ու շրջանները և ինքնավար

վատ էին ապահովված խմելու
զազաֆիկիացման ու շատ այլ
երից և սովխոգներից միայն 5
պլում երբ համաձայն հանրա-
սնք բոլորը 1988 թ. պետք է
ւմ, երբ գործնականում անբող-
Պ-ի գազամուղն անցնում էր

քաղաքականությունը ինքնա-
ունենր: Ամենապարզը Ղարա-
ները չկատարելն էր, ենթակա-
ությունը և հաշվի առնելով սար-
ությունը, Լեռնային Ղարաբաղը
1920-1930-ական թվական-
այան մեկ մարդու հաշվարկով
լը մոտ 10 անգամ ավելի քիչ
ում: Ճիշտ է, Գ. Ալիևի իշխա-
քաղաքականությունը փոքր-
աբաղում պարզապես կապի-
րա օրոք սկսեց խրախուսվել
զացումը: Բաքվի ղեկավարու-
արդրեջանական շրջանների
կուրսը: Այսպես, հիմնական
ծովում, որ ցանկացած շրջ-
աննել միայն հարևան աղբրե-
ն տանող ճանապարհը անց-
ում ԼՂԻՄ տարածքում գործ-
ն ճանապարհները: Ստեփա-
նապոլսությունները տեղա-
այանը համարվում էր եվկա-
նեսային և ռադիոհեռարձակ
կ հեռախոսակապի գծերի
աղորդումների ընդունման
ային Ղարաբաղը ենթարկում
ուշիի և մոտակա աղբրեջ-
վում ու վերահսկվում նաև
սրման համակարգերը: Նույ-
մ տեղակայված Սարսանգի
շիբից, որտեղ և որոշվում էր
ինչ դուրս էր բերվում մար-
ն: ինքնուրույն տնտեսական
ը հետևողականորեն վերած-
ամնաց ենթակառուցվածք-
թյուն ունեցող արդյունաբե-
նորոշված էր բացառապես
տակարարելով մասնաբեթի
ն միակոմբինատ և սառնա-

րանային գործարան: Գիմնական ոլորտը զինեզործություն
հենց Ղարաբաղում արտադրվում էր միայն կոնյակի սպ
կոնյակն արտադրվում էր Աղղամում և Խանլարում: Նույն
նաև զինու թանկարժեք տեսակներին. նրանց լցավորումն
էր ԼՂԻՄ սահմաններից դուրս: Ղարաբաղի խոշորագույն
կան ձեռնարկության մետաքսի կոմբինատի արտադրու-
դուրս էր բերվում մարզից, որտեղ դրանից պատրաստվու-
այլ արտադրանք: Անտառով և շինանյութերով հարուստ
բացակայում էր փայտամշակման արդյունաբերությունը,
րի մշակումը գտնվում էր սաղմնային վիճակում: Ամբողջ Լ
նաև նրան հարակից հայաբնակ շրջաններում չկար որևէ
որտեղ արտադրվում էր պատրաստի արտադրանք: Հատկ
ավանդական տնտեսական գոյության հիմքերը խարխուլ
Բաքվի կողմից տարվող այս բացառապես ագրա-բային
տնտեսության կառուցվածքային փոփոխման կուրսը:

Աղբրեջանական տնտեսության մեջ ԼՂԻՄ-ը բացա-
յացվում էր որպես հուսմելի կցորդ: Ինքնավարության
տնտեսական կապերը զրեթե ամբողջությամբ դրվում էին
մեջ և, ինչպես նշվում էր աղբրեջանական տնտեսագետ
պես փաստարկ Աղբրեջանի կազմից դուրս ԼՂԻՄ-ի գր-
րինությունը, հարևան Հայաստանի և Վրաստանի հետ ըն-
սական կապերում ԼՂԻՄ մասնաբաժինը կազմում էր
տոկոս⁵⁸:

Բնակչության ծայրահեղ ցածր կենսամակարդակը
էր ոչ միայն արդյունաբերության ու գյուղատնտեսությու-
մանը, այլ նաև այն ժամանակ ԼՂԻՄ-ի օրինակաբացվա-
քականությամբ: Խորհրդային տնտեսական համակար-
ունեին այսպես կոչված «պետական գնումներ», երբ է-
մարտինները խիստ ցածր գներով վերցնում էին գյու-
արտադրանքը: Ըստ էության դա արտադրանքի բռնագր-
ԼՂԻՄ-ի պարագայում, պետության ու գյուղմթերքներ ս
հարաբերությունների խորհրդային համակարգին բնոր-
կությունը առանձնահատուկ կոշտ ձևեր էր ընդունում:
անասունի և թռչնի «պետական գնումները», ԼՂԻՄ-ի մեկ
մոտ 4,6 անգամ ավելին էր, քան ագրարային Նախիջևն
անգամ, հացահատիկինը 1,4 անգամ, իսկ խաղողինը
ամենը դուրս էր բերվում ինքնավարության սահմաննե-
բնակչությանը սեփական աշխատանքի արդյունքների ն
րույն տնօրինման հնարավորությունից⁵⁹:

Աշխատատեղերի բացակայությունը և խիստ ցածր
հանգեցնում էին ոչ միայն հայկական մտավորականու-
խատունակ բնակչության մեծամասնության, առաջին հ
դության միզրացիային: Այս միզրացիան խրախուսվու-
կոչված «պրոֆիավաքի» կողմից. սկսած դպրոցական
տարիքից երիտասարդության ուղարկում էին ԼՂԻՄ սս
պրոֆտեխնիկական ու գործարանային ուսումնարան
որից հետո նրանց բաշխում էին Աղբրեջանի նորակա-
րական օբյեկտներով /Սոււձայիթ, Մինգեչաուր և այլն/
տասարդ կադրերն ապահովվում էին մշտական աշխատ-

որի հույսը նրանք չունեին Լեռնային
Մույնիսկ ԼԴԻՄ-ում բազմում էին
սպա գերազանցապես արդրեանա-
ցիչ գործոն հանդիսացավ հարակից
սարդուլայան ներգրավման համար:

Լեռնային Ղարաբաղում չկար ոչ մի
Մաքելական եկեղեցու Արցախյան
համար/, այն դեպքում, երբ Շուշիում
գար արդրեանցիների կրոնական
պատրոնն գործում էին մզկիթներ:
Սպազում եկեղեցիներ ոչ միայն չէին
ստիճանաբար բանդվում էին⁶⁰:

Մտադրեանական իշխանությունների
դաքականությունը հանգեցնում էր
վանություն պահպանման համար
ունենրի:

Մագծորեն տարբեր պատկերացում-
ակութային ու քաղաքական մույնա-
բավական ցայտուն է հորիդային
ը: Համաձայն այդ տվյալների, հոր-
ուն Լեռնային Ղարաբաղում ընդիա-
ն օգտին չէր. այն դեպքում, երբ
այան թվաքանակը կտրուկ աճում էր,
րապես մույն մակարդակին: 1926 թ.
ն 117 հազար հայեր և 13 հազար
ռախսանաբար 123 հազար և 37
ն շրջանում ակնառու էր բացասա-
979 թթ. ընթացքում մարզի արդրե-
եր 37 տոկոսով, իսկ հայկական

բնավար մարզերի զարգացումները
ն, ստեղծման պահից մինչև 1986 թ.,
նչև 400 տոկոս, և միայն Լեռնային
վոսի, այսինքն 19 հազար մարդու,
արդու, ինչը բնակչության բնական

որ Արդրեանի կազմում գտնվելու
զոհության համար հիմք են հանդի-
ն զարգացման համար կապիտալ
դյունքում տեղի էր ունենում ԼԴԻՄ
րթություն ստանալու նպատակով
անում հայրենիքում մասնագիտա-
ն առաջանում էր նաև ինքնավար
մանը և Հայաստանի հետ մշակու-
ու պատճառով. չէին բավականաց-
արձակվում երևանի հեռուստահա-
կան դերասանների ու մշակույթի
արաբաղ⁶³:

ԼԴԻՄ տարածքից դուրս ԱրդրեսԱՀ շրջաններում
հայերը կենտրոնական հանրապետական իշխանու-
տնտեսական ոլորտում մույնպես ենթարկվում էին
մուսրի: Այսպես, միայն Քուռ գետի ծախսափնյակի
գծի եկայնքով տեղակայված էին շուրջ 90 գյուղե-
շարունակ ԱրդրեսԱՀՄ-ում զինեգործությանը գրադվ
հայկական բնակչությունը: Հայերի ճեռքից զինեգ
վերցնելու համար ԱրդրեսԱՀ Կոմկուսի կենտկոմի
Ալիկի նախաձեռնությամբ, Քուռ-Արաբսի հովտում, ու
բակագործությունը, արագ տեմպերով սկսեցին ներ-
թյունը, և այդ գործընթացում թույլ տրվեցին այքակ-
րուունների բազմաթիվ դեպքեր: Միաժամանակ
բնակիչներին ստիպում էին խաղողի բերքը վերամշ-
կմ հեռավորության վրա գտնվող արդրեանական գ-
ւ, թե ինչպիսի բացասական հետևանքներ դա կար-
դան գյուղերի տնտեսության վրա: Անհրաժեշտ է նա-
ղեակվարման տարիներին կառուցվեց Շեմախի-Տ-
կարզ ավտոմայրուղին, սակայն մայրուղին ա-
որպեսզի հայկական գյուղերը դրանից կտրված մնա-

Ղարաբաղյան եթնոքաղաքական հակամարտու-
ճառային բազայի սոցիալ-տնտեսական փաստոր-
զգուշորեն վերաբերվել, քանի որ այդ ժամանակ
ԼԴԻՄ-ի զարգացման սոցիալ-տնտեսական ցուցանի-
յան կողմերից հաճախ տրամագծորեն հակադիր մե-
փաստերի դիրքերից են բերվում:

Այսպես, միջազգային կազմակերպություններ
տոնական զեկույցներում արդրեանական կողմը
թթ. ընթացքում ԼԴԻՄ զարգացման համար տրամա-
կապիտալ ներդրումներ, ինչը 2,8 անգամ գերա-
տարիների կապիտալ ներդրումների գումարը: 20
ԼԴԻՄ-ում շուրջ 4 անգամ աճել է կապիտալ նե-
ընկնող միջին ծավալը /1961-1965 թթ. 59 ռուբլու
թթ. 226 ռուբլի/: Հակամարտությանը նախորդող 15
ԱրդրեսԱՀՄ-ում մեկ մարդուն ընկնող բնակար-
ընդհանուր առմամբ կազմել է 3,64 ք.մ., իսկ ԼԴԻՄ-ը

Մարզի սոցիալ-մշակութային զարգացման բն-
թյունը բնակարանների, ապրանքների ու ծառայու-
մակարդակով նրա գերազանցությունն էր ընդհա-
մակարդակի նկատմամբ: Մարզի յուրաքանչյուր
բնակամակերես ուներ, քան հանրապետական միջի-
գյուղացին իր տրամադրության տակ 1,5 անգամ
քան հանրապետության գյուղացին: Մարզի բնակ-
ապահովված միջին բուժանձնակազմով /1,3 ան-
նոցային մահճակալներով /3 տոկոսով ավելի/: Ա-
լուսավորչական հաստատությունների ցանցը /3
սարքավորումները և ակումբային հաստատությու-
դարանները/, 100 ընթերցողի հաշվարկով գրքերի
ավելին էր 1,6 անգամ: Դպրոցներում երկրորդ
սովորում էին մարզի երեխաների 7,7 տոկոսը, այ

նշուր չորրորդը, իսկ մշտական նախադպ-
մ ընդգրկված էր երեխաների 37 տոկոսը
20 տոկոսը/:

պերով էր զարգանում, քան ընդհանուր
թե 1970-1986 թթ. ամբողջ հանրապետու-
դրությունը անել է 3 անգամ, ապա ԼՂԻՄ-
յստեղ 8,3 տոկոսով ավելին էին/։ 1986 թ.
գտագործումը 1970 թ. համեմատությամբ
մ էր հանրապետությունում 2,5 անգամ:
ական ցուցանիշներով ԼՂԻՄ-ը գերազան-
ակի միջին հանրապետական ցուցանիշ-

ՍՂ-ին ինքնավար մարզի վերանիավոր-
ի հայերի կողմից առաջ քաշած պահանջ-
հատվածի ԼՂԻՄ սոցիալ-տնտեսական
տ տարբերվում են:

կրորդ կեսին Դարաբաղյան Հակամար-
այություն սոցիալ-տնտեսական շերտը
բաղի հայերի կենսամակարդակն ավելի
եցանական բնակչության մակարդակից:
տեսական չափանիշներով հայերը գերա-
ան: Հակամարտության սոցիալ-տնտեսա-
ին նրանում, որ Լեռնային Դարաբաղի
ենց կենսամակարդակը որոշվեր միայն
: ԼՂԻՄ-ի հայերը գիտեին, որ հարևան
ամակարդակն ավելի բարձր է և համոզ-
ենսամակարդակը Ադրբեյջանի իշխանու-
անության դիտավորության արդյունքն
շենքով ԼՂԻՄ կենսամակարդակը նույ-
հանրապետականը, սակայն ընդհանուր
ը մարզում իսկապես տպավորիչ չէր,
ակարդակի հետ համեմատած: Չնայած
ության մեջ տնտեսական գործոնն իր
յերի հիմնարար պահանջները գտնվում
էր համընկնում ԽՍՀՄ կուսակցական-
կետի հետ⁶⁷:

ությանը պայմանավորված, Ինքնավար
ուրիչ ուղղվածությունը ոչ թե այն էր, որ
ունենորը ենթարկվում էին կոշտ խտրա-
ենք ավելի վատ էին ապրում, քան
ությունը, այլ այն, որ նրանք իրենց
զարգացումը տեսնում էին այլ միութե-
ակներում /ՉայկեՍՄ/ և հետևաբար,
արաբաղի հայության սոցիալ-տնտեսա-
պայմանությունը, ապահովությունը և
ր էր միայն ինքնավար մարզը ՉայկեՍՄ

1. «Երբ դա տեղի է ունենում, մենք արդեն ի
հավանական իրավիճակի, երբ հայությունն ինքը կա-
զրկման պատճառ դառնալ, երբ այդ առանձին
իրավունքները հանելուկային ձևով դադարեցնում
Օրինակ, այն պահին, երբ Լեռնային Դարաբաղում
Ադրբեյջանում ամփոփապես հայտնվում է «մյուս
ճամբարում, և նրա քաղաքացիական իրավունքն
արմատական փոփոխություններ: Նույնը կարելի
արդրեցանցու վերաբերյալ»: (Язык и этноический
Оксонин, Н. Семенова), М., «Гендальф», 2001, с. 21-22).

2. Հակամարտությունը զուտ երնիկական չէր, այլ
հակամարտության մեջ չէին հանդիսանում ազգային
1988 թ. հակամարտության վերականգնման պահին նրա
վասար հանդես էին գալիս որպես ԱդրբեյՄՅ պետ-
հակամարտությունը ծագեց որպես պետա-իրավ-
ազգային-պետական կառույցի երկու տարբերակների
ազգային ինքնավար մարզի /ԼՂԻՄ/ և միութենա-
ԱդրբեյՄՅ/:

3. Ներկայիս հակամարտությունը դա 1918-1920
Արևելյան Անդրկովկասի հայերի և թուրքերի /ար-
իմնական եթնագործոնների միջև/ Արևելյան Անդր-
կաստեցվածքի շուրջ: - (А. С. Манасян, Карабахский
эроника, Ер., «НОФ Нораваик», 2005, с. 27).

4. Ինքնավարությունների ազգային շարժումներում
ունեցան տարածաշրջանային քաղաքական կ-
տարերայնորեն առաջացել էին 20-րդ դարի 80-ակ-
քաղաքական ազատականացման արդյունքում: Լե-
մարզում 1988 թ. ստեղծվեց «Կոունկ» կոմիտեն: Գ-
յուրատեսակ հանրաքվեի արդյունքների վրա,
վերամիավորվելու օգտին հավաքվել էր 80 հա-
միտեն և իշխանության մարզային մարմիններ
կազմից դուրս գալու և Հայաստանի կազմում ընդ-
Источники возникновения этнополитических конфлик-
та. докл. науч // Московский гуманитарный универ-

5. Э. А. Паин, А. А. Попов, Межнациональные кон-
тиграфия», М., 1990, № 1.

6. Smith, Anthony D. Myths and memories of the Nation
1999, p. 9.

7. А. Г. Здравомыслов, Социология конфликта, М., «А-

8. Բազմազգ պետությունը կարելի է տեսակա-
րածքային կառուցվածքով պետություն այն բնակ
պետականության տարրերով: Իսկ երբ խոսք է գն-
պետության մասին, ապա կիրառվում է «պոլիէթնիկ»
С.А. Романенко, Типология процессов нации
«Общественные науки и современность», М., 1999, №

9. Э. А. Паин, А. А. Попов, Межнациональные кон-
тиграфия», М., 1990, № 1, с. 12.

10. А. Х. Нерсисян, Типология этнополитических
чтения. Аспирантъ», Том № 1, 2003, (электронный
факультета МГУ).

11. Ариф Алиев, Старая песня о главном // Карабах
(А. Алиев, С. Григорян, Р. Мусабекян, Б. Навасардян)

12. Իրականում Դարաբաղում տեղի է ունեն-
եթնոքաղաքական հակամարտություն, որոնք 2

«...» հենց սկզբում խորհրդային էր տալիս բազմազգ պետությունների մակարդակի «սոցիալա» անհրաժեշտության մեջ: Այսպես, բերրը գրում էր, որ «չի կարելի վատասարությանը»... անհրաժեշտ է ազգերի հավասարության փաստատուների մշակմանն ու կյանքի տնտեսական փնակի, կենցաղային գարգացմանը, Յ. քաղաքագույն մեներին նրանց աստիճանաբար և առաջավոր ազգերի սգործակցության հաստատմանը: սորունները բնորոշող կողմերը»

... в трансформации политических и социальных проблемы современного той научной конференции (отв. ред.

ология: Учеб. Пособие, Ростов-и/Д, СССР (отв. ред. Ю. В. Бромлей), М.,

... theoretically About Soviet Nationalities: Ed. A.J. Motyl). New York: Columbia

... նի գրողի պատկերավոր արտա- յան համապետական, համաժողո- յերի տեղական նասիրությունը, նը, մեր գլխավոր արժեքին, որի վը» (Ю. В. Бромлей, Национальные Наука», 1988, с. 35 со ссылкой на А. газета», 10 августа 1988г.

... լովորը օգտագործելով խոսքի ու խաղաղ բողոքների ազատուր- տախայտելու համար: Բողոքների լի մտածելու, որ դրանք հրահր- ծայրահեղ հանդուներենով այժ մոլորկոյի մոտ խորը արմատա- ազատությունները մշտապես ու րայր Բախյան, Нагорный Карабах и оловека, Ер., «Михаил Варданян»,

... ые понятия и хроника, Ер., «НОФ ... րт, Ер., «Лингва», 2001, с. 65.

... 1989 թ. նոյեմբերի 28-ի որոշումը առունների մասին»: Որոշումը րա փոխարեն պորբեջանական

... Верховного Совета СССР, 1991, №

49. Г.И. Андреева, Конституционное право зарубежных стран: Уч. 2005, с. 184-185.

50. Օրենքի դրույքները վերարտադրվեցին, մասնավորապես, օրենսգրքի 74-րդ հոդվածում: խորհրդային օրենսդիր ազգա- իրավահավասարության խախտումների համար պատասխան- արվում էր կախված նախատեսված դատավարող հատ- րարժր պատասխանատվություն սահմանված էր, եթե նշված զուգակցվում էին բռնությունների կամ սպառնալիքների հետ, վում էին պաշտոնատար անձի կողմից /74-րդ հոդվածի մաս- ղնայերում, եթե դրանք կատարվում էին անձանց խմբի կողմից էին մարդկանց մահվանը կամ այլ ծանր հետևանքների /ՌուՖՆ Այտտեղ և հետագայում բերվում են ՌուՖՆՍՅ օրենսդրույք- նորմերը: ԽՍՀՄ-ում յուրաքանչյուր միութենական հանրավի- հանրապետական օրենսդրությունը, սակայն այն հիմնվ- միութենական օրենսդրության միասնական նորմերի վրա, որո- քաղաքացիա-իրավական և քրեա-իրավական հարաբերու- արտախաղվում էին ամենախոշոր հանրապետության օրե- տեսքով ՌուՖՆՅ Օրենսգրքերով:

51. С. Зюзян, Нагорный Карабах: проблема и конфликт, Ер., «Линг

52. В. Г. Смольский, Национальные конфликты в СССР и СНГ Уд», «БНЦ СО РАН», 1996, с. 85.

53. А. Н. Яасков, Межнациональные конфликты Закавказья: возникновения и тенденции развития // «Политс», 1991, № 2, с. 80.

54. Социальные вопросы и вопросы прав человека: права человека комиссара ООН по правам человека, Основная сессия Экономического Совета ООН 2006 года, E/2006/86, 21 июня 2006г.).

55. Ibid.

56. Հաղորդի շրջանի բնակչությունը 1913 թ. կազմել է 33 հազ., 1959 թ. 17 հազ., 1970 թ. 16 հազար: Այստեղ, ինչպես նաև տարիների ընթացքում չի կատարվել ոչ մի բնակելի տուն, ոչ Գյուղերում չկան դպրոցներ, հիվանդանոցներ, ակումբներ կառուցվում, փոխարենը ամեն ինչ ավերվում է: Երջանում քրան 5 հազար անտեր տներ: Հաղորդը հիշեցնում է Աստուծո կանչում, որին չի հասել քաղաքակրթությունը: (Տմ. Լ. Գուրու, как докричаться до вас, потомки! Дневниковые записи 1975-19 Исаакян), Ер., «Зангак-97», 2002).

57. В. Б. Арутюни, События в Нагорном Карабахе: Хроника (Худавердян), Ч. 1, Ер., «АН АрмССР», 1990, с. 21-22.

58. Газета «Коммунист» (Баку), 11 марта 1988г.

59. С. Зюзян, Нагорный Карабах: проблема и конфликт, Ер., «Лингва», 2001, с. 65.

60. Нагорно-Карабахская Республика: история и современность (Атаджаян), Степанакерт, «ФОПИ», 1998, с. 5, 11.

61. В. Б. Арутюни, События в Нагорном Карабахе: Хроника (Худавердян), Ч. 1, Ер., «АН АрмССР», 1990, с. 24.

62. Справочник «Годы труда и побед», М., «Политиздат», 1987.

63. В. Г. Мотылев, Карабахский конфликт в контексте междунациональных отношений: проблемы независимого развития (под общ. ред. Л. М. РИСИ), 1998, с. 487.

64. Г. Авакян, Нагорный Карабах: ответ фальсификаторам, Ер., «

65. Sbu Доклад Азербайджанской Республики в ООН по выполнению международно-правовых обязательств в соответствии с Междунациональной декларацией о ликвидации всех форм расовой дискриминации 1965г. (Декларация принята государствами-участниками в соответствии со статьей 9 Контракт Add.1, 19 August 2004, с. 3-5): Доклад Азербайджанской Республи

ных обязательств в соответствии с
меньшинств 1995». (Report Submitt
1 of the Framework Convention for the
ACFC/SR (2002) 1, 4 June 2002, p. 13-

մ էին, որ «ԼՂԻՄ բնակչության մեկ
քրեալ հանդիսանում է ոչ քե նրա
ուկ հոգատարության արդյունք, այլ
-տնտեսական ու քաղաքական
մարզից հայկական բնակչության
քք. ընթացքում ԼՂԻՄ-ում նոր
մանրությունը դրված էր տեղի
ողների, կոլտնտեսականների ու
, այն դեպքում երբ ԱդրբեյսՄ-ում
նեղ է հաշվի առնել նաև այն, որ
ությունների կողմից կառուցված
էր Շուշիում, որտեղ բնակչության
(Краткая социально-экономическая
Вакал, Нагорный Карабах: ответ

этнополитических конфликтов в
ковский гуманитарный университет,

Ղարաբաղյան Հակամարտության մեջ ԱդրբեյսՄ-ի և Ա
Հանրապետության ներքին և արտաքին ագրեսիայի քա
իրավական ասպեկտները

Ներածություն

1988-1991թթ. հայկական բնակչության տոտալ էթն
խորհրդային Ադրբեյջանի տարածքում և Ադրբեյջանի
հաջորդող ռազմական ագրեսիան Լեռնային Ղարաբ
բյան դեմ 1991-1994թթ. դարձավ Ադրբեյջանի ուժայ
Արցախի¹ բնակչության սեփական պետականություն
ների դեմ:

Խորհրդային Ադրբեյջանի կողմից հայ ժողովրդի
նացվող էթնիկական գաղումների փոխաձևումը այդ ժա
վորված Ադրբեյջանի Հանրապետության ռազմական
այն ժամանակ գործող Խորհրդային օրենսդրության, ի
ինքնորոշման միջազգային իրավական նորմերին
կազմավորված ԼՂՀ-ի դեմ, դարձավ Հարավային Կովկ
կան պետականությանը ներհատուկ հակահայկական
քաղաքականության հենքի «քնական» մասնիկը:

Լինելով ժամանակակից միջազգային իրավունք
ծողություններ էթնիկական գաղումները, ցեղասպան
իրենց մեջ ներառում են քաղաքական կանխորոշման
էթնոմշակութային, էթնոազգային «բարդության վորված
բյունների «արդյունավետ» պայքարի զինանոցում, ք
քիչ ներկայացված այլ ազգերի և ազգությունների նկ
մավորվող ազգային պետականության տարածքում
պետականության կառուցման փորձ ունենալու և
ժողովրդավարական հասարակական-քաղաքական հս
ման հավակնությունների, որի շրջանակներում կպաշ
խավորվեն մարդու իրավունքների և ազատությունների
կանոնները:

Գլուխ 1. Միջազգային իրավունքի կիրառելի
ԱդրբեյսՄ-ի հայ ժողովրդի նկատմամբ կիրառվա
ցեղասպանության հարցում

Պատերազմական գործողությունների անցնելու
մանափակված էր 1919թ. Ազգերի Լիգայի կանոնադր
նաև պատերազմը «որպես ազգային քաղաքականու
վեց 1928թ. Փարիզի պայմանագրով՝ «Բրիտան Կելուզի ս
գրվել էր այն ժամանակվա առաջատար պետություննե
ՄԱԿ-ի կանոնադրությամբ Փարիզի պայմանագիրը ս
բյունները հայտարարեցին, որ դատապարտում են ա
միջազգային վեճերի կարգավորման միջոց և հրաձ
որպես ազգային քաղաքականության գործիք: ՄԱԿ-ի
արգելում է ուժի դիմել միջազգային հարաբերությու

ողությունների և անհատական ու
նության իրավունքի դեպքերի: Ուժի
քը միջազգային հարաբերություն-
տարբերակվեն ազրետորը և գոհը
քը այդպիսի տարբերակում անց-
նպիսի կատեգորիաներում, ինչպի-
նքնապաշտպանության օրինական
կուլեկտիվ միջոցառումների կիրա-
նազմական գործողություններից
«ռազմական գործողություններից
նախատեսվում է այն անձանց
ակցել են ազրետիվ պատերազմի
ն և նրա դեկավարմանը:

նից որպես անօրինական ակտ,
ան հետևանքներ, որոնց մեջ, բացի
նաձայնազրերի անվավերությունը,
ման կամ սպառնալիքի օգնու-
րորդ պետությունների կողմից: Ոչ
14-ի կանոնադրությունը ազրետիա-
ունակում: Գոյություն ունի 1974թ.
մբլեայի 3314 բանաձևը, որը հենց
հմանում: Տվյալ բանաձևի տեքս-
ություն ունի խիստ միջպետական
ություն կողմից ռազմական ուժի
թյան, տարածքային անձեռնմխե-
թյան դեմ» (հոդված 1), և առկա
ան հերթականության չափանիշը
ություն կողմից առաջինը ռազ-
prima facie /«առաջին հայացքից»
ն (հոդված 2): Բանաձևի հիշյալ
պումներ ազրետիայի միջպետա-
երից (հոդված 1-ում նշված է, որ
ներմինը օգտագործվում է առանց
արդյոք պետությունը ՄԱԿ-ի ան-
ռաջնահերթությունների պարտա-
հոդված 2-ում ասվում է, որ
րության հետ համաձայնեցված
րետիայի ակտն իրականացվել է,
ամանքներում, ներառելով այն
րը կամ նրանց հետևանքները

խակոր Ասամբլեայի թիվ 3314
նատախանությունը ազրետիայի
ներք ազգային ազատագրական
ության ուշադրության է արժանա-
թի կիրառման պատճառը, ինչը
հետ, քանի որ իրավական հետև-
օրյեկտիվ և ստուգման ենթակա

Պետության գործողություններում ազրետիայի ան-
միջազգային-իրավական գնահատական տալու իր-
ուսպես պատկանում է ՄԱԿ-ի Ավտանգության հ-
կասմբլեայի բանաձևը ՄԱԿ-ի անդամ-երկրների համ-
ուկական բնույթ, ուստի և «չկան իրավաբանական ջա-
գության խորհրդի որոշումը հանդիսանում է միայն քա-

Ազգային-ազատագրական պատերազմների ժ-
կողմից սեփական պետականության ստեղծման ժ-
իրականացման ժամանակ, կարող է մի իրավիճակ ա-
իրավունքի իրականացումը հանդիպում է ուժայն
փուլզման փուլում գտնվող պետական գոյացության
ժողովրդավարական կամի արտահայտմանը խոչըն-
դությունները, որը միտված է սեփական պետական
կարելի է գնահատել որպես «ներքին ազրետիա»,
դիտարված համար գոյություն ունեն բոլոր փաստա-

ԱրդրեսՄՅ-ն ստեղծվել է 1920 թ. Ռուսաստանի բ-
լիստական թնուրբայի ջանքերով որպես բազմազգ ս-
/մի կողմ թողնելով տվյալ պետական գոյացության ս-
ու իրավական օրինականությունը/, որտեղ որպես պ-
զեր էին հանդես գալիս թուրք-մահմեդականները կա-
ները /ներկայիս ադրբեջանցիները/ և հայերը /վերջի-
թյան այլ ազգություններից միակն էին, որոնք Ադրբե-
ինքնավարությունը/: ԽՍՀՄ ընդհանուր փլուզման
Ադրբեջանը ձեռնամուխ եղավ սեփական ազգային պ-
նը, որը դարձավ միջազգային հարաբերություն
իրավունքի անկախ սուրյեկտ:

Պրան նախորդող իրադարձությունները, որոնք ծ-
լիս Ադրբեջանի Գանրապետության /ԱԳ/ տարածուր-
ընթանում էին փաստացի և իրավաբանորեն /դե-ֆե-
ժամանակակ զոյություն ունեցող միասնական ԽՍՀՄ
ակնհայտորեն ցույց տվեցին նորաստեղծ թուրք-ադ-
կանության ի դեմ ԱդրբեսՄՅ պետականաստեղծ ա-
ջանցիների/ անկարողությունը անհետացող Ադրբես-
նաստեղծ ազգի /հայերի/ հետ խաղաղ «բաժանմա-
ջատման հարցում: Նոր ստեղծվող ադրբեջանակ
ազգայնական-շովինիստական բնույթի քաղաքական
հետև ստանձնեցին Ադրբեջանի Գանրապետության
սադրում և անմիջականորեն իրագործում էին զան-
գործողություններ հանրապետության հայ ժողովրդի
նկատմամբ: Գլխավոր նպատակը հայկական պետ-
ֆիզիկական վերացումն էր նոր ստեղծվող ԱԳ-ի քա-
